

Նաիրա Բալայան

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 5-10-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ
(Դասախոսությունների նյութեր)

Երևան

Հեղինակային հրատարակություն

2015

ՀՏԴ 821.19.0 (042.4)

ԳՄԴ 83.3 (5Հ) ց7

Բ 200

Դասախոսության նյութերը հրատարակության են երաշխավորվել
Կրթության միջազգային ակադեմիայի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ բան. գիտ. թեկնածու Անժելա Խորենյան

Բալայան Նաիրա

Բ 200 Հայ գրականությունը 5-10-րդ դարերում / Ն. Բալայան.- Եր.:
Հեղ. հրատ., 2015.- 59 էջ:

Գրքում ներկայացված են բանասիրական գիտությունների
թեկնածու Նաիրա Բալայանի՝ Կրթության միջազգային ակադեմիայի
«Հայրուսակ» համալսարանի հումանիտար ֆակուլտետում «Հայ
գրականության պատմություն» դասընթացի շրջանակում ընթերցած մի
քանի դասախոսություն: Դասախոսություններում ներկայացված են հայ
պատմագրության առանձնահատկությունները, 5-10-րդ դարերի
ականավոր դեմքեր Մովսես Խորենացու և Գրիգոր Նարեկացու գրական
Ժառանգության հարցերը: Գիրքը նախատեսվում է համապատասխան
դասընթացների ուսանողների, մասնագետների, հայ հին
գրականության հարցերով հետաքրքրվող ընթերցողների համար:

ՀՏԴ 821.19.0 (042.4)

ԳՄԴ 83.3 (5Հ) ց7

ISBN 978-9939-0-1533-0

© Բալայան Ն., 2015

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 5-10-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

(Դասախոսությունների նյութեր)*

1. Հայ գրականությունը 5-րդ դարում: Հայ պատմագրություն, առանձնահատկությունները

Հայերը պատկանում են հնադարյան քաղաքակիրթ ազգերի թվին, որոնք, չնայած պատմության ոչ հարթ ընթացքին, ստեղծել են բացառիկ արժեքավոր մի մշակույթ, որ նրանց դասում է աշխարհի առաջավոր, հնագույն քաղաքակրթություն ունեցող ազգերի թվին:

5-րդ դարի մատենագրության մեջ իր նշանակությամբ, հետագա դարերի գրականության վրա թողած ազդեցությամբ առանձնանում է հայ պատմագրությունը, որ գոյատևեց հարյուրամյակներ: Ժանրի գլխավոր առանձնահատկությունները ձևավորվեցին հենց նրա սկզբնավորման փուլում և խոր ընդգրկման հասան 5-րդ

* «Հայ գրականություն» առարկան դասավանդվում է «Օտար լեզու և գրականություն» մասնագիտությամբ կուրսում: Քանի որ դասավանդվող առարկայի դասախոսությունները բավական ծավալուն են, նպատակահարմար ենք գտնում այս ձեռնարկի սահմաններում ընդգրկել մի շրջան, որ իր եզակի նշանակությամբ այսօր էլ մնում է որպես այդպիսին և շատ կարևոր հիմք է հայ գրականության ճանաչման ու արժևորման գործում: Վերոհիշյալ շրջանը ներառում է 5-րդ դարի հայ պատմագրությունից մինչև հայկական Վերածնունդ ընկած ժամանակահատվածը:

դարի 2-րդ կեսին: Պատմական երկերում պատմական իրականության լայն ընդգրկումը դուրս է գալիս ազգային շրջանակներից, պատմագրական երկերում ժողովրդի պատմությունը տրվում է ոչ թե մեկուսի, միայն ազգայինի շրջանակներում կղզիացած, այլ այն ժողովուրդների ու տերությունների պատմությանը զուգընթաց, որոնց հետ պատմական հանգամանքների բերումով առնչվել է հայ ժողովուրդը: Շնորհիվ այլ ժողովուրդների պատմությանը անխզելիորեն կապված լինելու այս հանգամանքի՝ հայ պատմագրական երկերում պահպանվել են շահեկան տեղեկություններ Բյուզանդիայի, Պարսկաստանի, Վրաստանի, Աղվանքի, Բյուզանդիայի, Ասորեստանի, Հունաստանի և այլ երկրների, տարբեր, անգամ անհետացած ցեղերի ու ժողովուրդների՝ հույների, վրացիների, աղվանների, հոների, իսթերի, ալանների, հետագա դարերում արդեն արաբների, մոնղոլների, թուրքերի մասին: Այսպես օրինակ՝ պատմահայր Մովսես Խորենացու մեջբերած «Հայկ և Բել» պատումում երևան են գալիս բաբելացիների, «Արտաշես և Սաթենիկ» ավանդության մեջ՝ ալանների, «Տիգրան և Աժդահակ» զրույցում՝ մարերի, «Արա Գեղեցիկ և Շամիրամ» ավանդազրույցում՝ ասորեստանցիների մասին տեղեկու-

յուններ և այլն: Այդուհանդերձ, պատմական մեծ ու փոքր փուլեր ընդգրկող այս մատյանները ոչ միայն պատմական կարևոր վավերաթղթեր են, այլև գեղարվեստական արձակի հիանալի նմուշներ, որոնցում պատմական անձերի անհատականացում-տիպականացումը, քնարական շնչով հագեցած գեղեցիկ պատկերները, կենդանի երկխոսությունները, պատկերավոր լեզուն հիմք են տալիս այդ պատմագրական մատյանները բնութագրելու որպես պատմական-գեղարվեստական ստեղծագործութ-յուններ:

5-րդ դարի պատմագրության հիմնորոշ բնույթը պայմանավորված է ազգային բախտորոշ խնդիրներով ու իրադարձություններով: Այս շրջանի պատմագրության նշանակությունը նաև դարի հրամայականի, ազգային մաքառումների, ազգային ինքնադաստիարակության արտացոլումն է: Ազգային ինքնագիտակցության դաստիարակումը առաջնային խնդիր է եղել անխտիր բոլոր պատմագիրների համար, որոնք իրենց պատմություններով հեռահար նպատակն են ունեցել. ստեղծել են ոչ թե չոր ու ցամաք տարեգրություններ, այլ ազգային ներշնչումով, հայրենասիրական հզոր լիցքերով շաղախված պատմագեղարվեստական գործեր, որոնք ոչ միայն տվյալ ժամանակի, այլ հետագա սերունդների մեջ կսեր-մանեին

ազգի հանդեպ մեծ պատասխանատվության ու հպարտության հունդեր, կունենային պատմական հեռանկար: Հատկանշական է, որ Եղիշեն իր մատյանը համարել է «Մխիթարութիւն սիրելեաց, եւ յոյս յուսացելոց, քաջարելութիւն քաջաց¹»: Անշուշտ, այս նպատակով գրված երկերը չեն կարող պատմական չոր փաստերով կառուցված գործեր լինել: Եվ պատահական չէ, որ պատմագրական գործերը առանձնանում են հեղինակների զգացմունքային շեշտադրումներով, անձնական դիրքորոշումների առկայությամբ, պատմական անցքերի ու անձերի հանդեպ դրսևորած հեղինակային միջամտություններով, որոնք էլ, ի թիվս այլ գործոնների (հեղինակի կրթություն, գաղափարական ուղղվածություն, իշխանական որևէ տան հանդեպ համակրություն և այլն), պատմական դեմքերին տվել են գեղարվեստական կերպարացման, պատմական իրողություններին՝ գեղարվեստականացման միտումներ: Այսպես օրինակ՝ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» երկում պատմական անձերը՝ Արշակ-Փառանձեմ-Տիրիթ-Գնել, ու նրանց շուրջ ծավալվող իրողությունը հանդես են գալիս

¹ Եղիշե, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 4-5:

գեղարվեստական պատկերավորմամբ ու զգացմունքայնությամբ, որ հատուկ են գրական-գեղարվեստական գործերին: Կամ՝ Ագաթանգեղոսի պատմության մեջ հեղինակային զգացական վերաբերմունքը առավել ցայտուն երևան է գալիս Հռիփսիմյան կույսերի կամ Գրիգոր Լուսավորչի տանջանքներին անդրադառնալիս:

5-րդ դարի հայ պատմագրության կարևոր առանձնահատկություններից է նրա սերտ կապը ժողովրդական բանահյուսության հետ, որը ցայտուն կերպով դրսևորվել է Ագաթանգեղոսի, Բուզանդի, Խորենացու գործերում: Սակայն պատմիչները տարբեր կերպ են օգտագործել բանահյուսության ռեսուրսները: Եթե Ագաթանգեղոսի և Բուզանդի պատմությունները խարբսխված են ժողովրդական ավանդազրույցների վրա, որոնք հաճախ մեջբերվում են առանց հեղինակային միջամտությունների և դրանցում առկա հրաշքների նկարագրություններով, ժողովրդական հավատալիքներով հյուսված պյուժեներով, պատմական իրականությունը այլաբանորեն ցուցանող զրույցներով, ապա Խորենացին, Եղիշեն և Փարպեցին օգտվել են ավանդազրույցներից հասանելի այլ աղբյուր չունենալու պատճառով, ընդամին՝ կարող ենք առանձնացնել այս առումով Խորենացու եզակի

դիրքորոշումը, որի համաձայն՝ նա ընտրում և քննական վերաբերմունք էր դրսևորում մեջբերվող յուրաքանչյուր առասպելի հանդեպ:

Հայ պատմագրության մյուս առանձնահատկությունն այն է, որ, թեև պատմագրական շատ երկեր գրվել են առանձին իշխանական տների ներկայացուցիչների պատվերով, թեպետ նրանցում առկա են հեղինակի՝ իշխանական կամ նախարարական տների հանդեպ անթաքույց համակրանքը և հակակրանքը դեպի հակառակորդ նախարարական տունը, այնուամենայնիվ, ամբողջությամբ դրանք տոհմագրություններ չեն, այլ հայոց պատմության գեղարվեստական մատյաններ:

2. 5-րդ դարի պատմիչներ

Ժամանակագրական առումով պատմագրական առաջին երկը **Ագաթանգեղոսի** «Հայոց պատմությունն» է, որը նվիրված է Հայաստանում քրիստոնեության ընդունմանը. այն պատկերում է 226-330 թվականների շրջադարձային ժամանակաշրջանը: Գրքի հիմքը 301 թվականին քրիստոնեության՝ իբրև պետական կրոնի ընդունումն է Տրդատ Մեծ թագավորի կողմից: Հեղինակի մասին կենսագրական տեղեկություններ գրեթե չեն պահ-

պանվել, եթե միայն հաշվի չառնենք նրա՝ իր մասին գրած տողերը: Բանասիրության մեջ առ այսօր շարունակվում են նրա ապրած ժամանակահատվածի վերաբերյալ վեճերը: Ըստ որոշ քննությունների՝ Ագաթանգեղոսը (անունը, հունարենից թարգմանած, նշանակում է բարի հրեշտակ, ավետաբեր) 5-րդ դարի հեղինակ է, սակայն իրեն է վերագրում է 4-րդ դարում ապրած ու Տրդատի կողմից հայ արքունիք հրավիրված հույն դպիր Ագաթանգեղոսի անունը: Հ. Ա. Գուտշմիդը տարբեր խմբագրությունների համեմատական ուսումնասիրությամբ հաստատել է, որ Ագաթանգեղոսի բնագիրը հայերեն է, իսկ հունարենը՝ նրա թարգմանությունը: Սակայն այսօր էլ հրատարակվում են հայ միջ-նադարյան գրականության պատմությանը նվիրված գրքեր², որոնցում Ագաթանգեղոսը 4-րդ դարի պատմիչ է համարվում, հետևաբար նրա գիրքը՝ 5-րդ դարի թարգմանություն: Խնդիրը նրա նկարագրած հրաշապատում իրողություններն են, որոնք կասկածելի կարող են թվալ ոչ հավատացյալ ընթերցողին: Այդ պատճառով էլ հեղինակը ասում է, որ ինքը ոչ թե ականջալուր, այլ ականատես է եղել իր իսկ նկարագրած դեպքերին,

² Տե՛ս՝ Վանո Եղիազարյան, Հայ հին գրականության պատմություն, Երևան, 2014:

հետևաբար նրա վկայածը ոչ միայն իր ժամանակի ընթերցողների, այլև դարերի համար պիտի որ հավաստի թվար: Ագաթանգեղոսի գրքում իրական փաստերի շարադրանքը ազուցված է վարքագրական-վկայաբանական պատումներին, կրոնական լեզուներին, հրաշքների, տեսիլքների նկարագրություններին, ինչպես նաև ժողովրդական գրույցներին ու ավանդություններին՝ հիմնականում մեկ նպատակի՝ քրիստոնեական կրոնի մեծարման, հայոց առաքելական եկեղեցու իրավունքների հաստատման գաղափարի համար: Այդպիսի հրաշապատում գրույցներից են Հռիփսիմյան կույսերի նահատակության պատմությունը, Գրիգոր Լուսավորչի խոշտանգումների նկարագրությունը, Տրդատի խոզ դառնալն ու այնուհետ մարդու վերափոխվելը և այլն: Այդուհանդերձ, պատմական-գեղարվեստական սույն երկը նման հրաշքների նկարագրությունների քողի տակ թաքցնում է Հայաստանի համար շատ կարևոր ժամանակահատվածի պատմական եղելությունները:

Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» բաղկացած է երեք մասից և ամփոփում է 226–325 թթ. կարևոր իրադարձությունները: Առաջին մասը կոչվում է «Սուրբ

Գրիգորի վարքը և պատմությունը», որտեղ նաև գեղարվեստական ձևով պատմվում է Խոսրով Ա և Տրդատ Գ Մեծ արքաների գահակալության, Գրիգոր Լուսավորչի չարչարանքների ու Հռիփսիմյան կույսերի նահատակության մասին: Երկրորդ՝ «Վարդապետություն Սուրբ Գրիգորի» մասում ամփոփված է Գրիգոր Լուսավորչի քարոզած վարդապետությունը: Երրորդ մասում՝ «Հայաստան աշխարհիս փրկության դարձը...», պատմվում է Հայաստանում քրիստոնեության տարածման մասին: Ազաթանգեղոսի «Հայոց պատմությունը» ոչ միայն պատմական կարևոր վավերաթուղթ է, այլև ազգագրական նյութ, որտեղից իմանում ենք ժողովրդական ծեսերի, հեթանոս աստվածությունների և անգամ կենցաղային ինչ-ինչ դեպքերի մասին: Ավելորդ չէ նշել, որ այն մեծ ազդեցություն է թողել թե՛ իրենից հետո եկող պատմիչների, թե՛ հետագա սերունդների ստեղծագործողների գեղարվեստական գիտակցության վրա: Առաջին անգամ Ազաթանգեղոսի երկը տպագրվել է 1709 թ. Կոստանդնուպոլսում, իսկ դեռևս միջնադարում թարգմանվել է հունարեն, արաբերեն, վրացերեն, լատիներեն, ավելի ուշ՝ իտալերեն, ֆրանսերեն, գերմաներեն:

Յուրատիպ մի ստեղծագործություն է **Փավստոս Բուզանդի** «Հայոց պատմություն» պատմագրական երկը: Ինչպես նախորդ, այնպես էլ այս պատմագրի մասին կենսագրական տեղեկությունները քիչ են պահպանված, ավելին՝ այսօր էլ դեռ հայագիտության մեջ կան վիճելի հարցեր հեղինակի ինքնության, ապրած ժամանակաշրջանի, բնագրի լեզվի, պատմության գրման և այլ հարցերի շուրջ: Հավանական է, որ Բուզանդի «Հայոց պատմությունը» գրվել է պարսից տիրապետության լծի դեմ ուղղված II ապստամբության (481-484 թթ.) նախօր-յակին. այն հայտնի է Վահանանց պատերազմ անունով՝ ի պատիվ առաջնորդ Վահան Մամիկոնյանի. պատմությունը ընդգրկում է 331-380 թթ. պատմական անցքերի ժամանակագրությունը: Այն արժեքավոր աղբյուր է, քանի որ ուշագրավ տեղեկություններ է հաղորդում երկրի ներքին կյանքի, Արշակունի թագավորների ու կաթողիկոսների, հայ-պարսկական ընդհարումների վերաբերյալ: Կարող ենք արձանագրել, որ Բուզանդը, չնայած որ անունը պետք է հուշեր հակառակը, հույն չէ, այլ հայ, որովհետև իր իսկ գրքում այդ փաստը վկայող բազմաթիվ փաստարկումներ կան: Թերևս հիշենք այս հեղինակի բացառիկ հայրե-նասիրությունը և ցավը, երբ նա

խոսում է հայոց կաթոն-դիկոսների և թագավորների, երբեմն դավադրաբար մա-հանալու մասին: Հեղինակի ազգային պատկա-նելիության, ինչպես և պատմության բանասիրական քննությունները ցույց են տալիս, որ գիրքը թարգ-մանություն չէ. գրվել է հինգերորդարյան ոսկեդեմիկ հայերենով, հետևաբար հեղինակը իր նկարագրած դեպ-քերի ժամանակակիցը չէ, չնայած որ իրեն հույն է համա-րում: Բուզանդի երկի բացառիկ արժեքը ժողովրդական բանահյուսությունից մեծապես, շատ հաճախ նաև անքննադատաբար օգտվելն է. պատմական շատ դեպքեր ու անձեր ներկայացված են ժողովրդական բանահյուսության հենքի վրա. այդ է պատճառը, որ պատմական փաստերի մեծ մասը երևան է գալիս ժողովրդական գրույցները քողագերծելով, իսկ պատմական անձնավորությունները երկում ձեռք են բերել գեղարվեստական կերպարին բնորոշ առանձ-նահատկություններ: Կարող ենք հիշել հայ գրա-կանության պատմության մեջ բազմիցս շրջանառվող հայ և պարսիկ թագավորներ Արշակի և Շապուհի հայտնի գրույցը, որի պատումը դուրս է եկել պատմական եղե-լության շրջանակներից: Այստեղ երևան է գալիս հայ ժողովրդի հավաքականությունը խտացնող հայրենասեր

թագավորի գեղարվեստական կերպարը, որի ուժը շաղկապված է միայն հայրենի հողի ու ջրի հետ: Հիշենք նաև մեկ այլ գրույց՝ կապված Արշակ-Տիրիթ-Գնեկ-Փառանձեմ պատմությանը. այստեղ էլ պատմական հայտնի փաստերը՝ Տիրիթի և Գնեկի արքայական գահը խլելու դավադրությունը, Արշակ թագավորի կողմից վերջիններիս՝ եղբոր որդիների սպանությունն ու ամուսնությունը Գնեկի այրու՝ Փառանձեմի հետ, թանձրորեն սքողված են բանահյուսական շղարշով: Բազմաթիվ են նաև ժողովրդի կողմից պատմվող հրաշքների մեջբերումները, որոնք ունեն թե՛ հեթանոս ժամանակների, թե՛ քրիստոնեական շրջանի ծագումնաբանություն: Այսպես օրինակ՝ Պապ թագավորի՝ եկեղեցու հանդեպ «ոտնձգությունները», ըստ հեղինակի, հետևաբար ժամանակի կղերական մտա-ծողության, համարվում են դիվային, քանի որ Պապի մայրը՝ թագուհին, որ չէր սիրում իր թագավոր ամուսնուն, մանուկ ժամանակ որդուն տվել էր դևերին, և մեկ անգամ ինքը՝ Փառանձեմն է համոզվում դրանում՝ տեսնելով որդու ոտքերի մոտ սպիտակ օձերի կերպարանքով սողացող դևերին: Այնինչ պատումի իսկությունը ածանցված է Պապ թագավորի վարած ռազմավարական խիստ քաղաքականությունից.

Պապը փակում էր կուսա-նոցներն ու միաբանությունները, ամուսնացնում կու-յսերին ու միաբաններին և նրանց հող նվիրում, հզո-բացնելով ընտանիքը՝ հզորացնում էր երկիրը՝ միա-ժամանակ թուլացնելով եկեղեցու իշխանությունը:

Բուզանդի պատմության մյուս առանձնահատկությունը հայ գրականության պատմության մեջ առաջին անգամ կիրառվող երգիծանքի տարրն է, որ երևան է գալիս ոչ միայն պատմության էջերում, այլև երկի վերջում՝ գետեղված Հովհան Եպիսկոպոսի մասին երեք փոքրիկ պատմություններում, ուր հումորի ուժով ձաղկվում է ընչաքաղց հոգևորականների մի ներկայացուցիչը՝ Հովհան Եպիսկոպոսը:

Բուզանդի երկը մեծապես նպաստեց հայոց հին գրականության մեջ պատմական ոճի մշակմանը, ինչպես նաև մեծ ազդեցություն թողեց հետագա դարերի գեղարվեստական գրականության վրա: Նրանից են քաղված նաև 19-20-րդ դարերի գրական ստեղծագործությունների բազմաթիվ սյուժեներ (Բաֆֆու «Սամվել», Ստ. Զորյանի «Պապ թագավոր», «Հայոց բերդը», «Վարազդատ» պատմավեպեր, Լևոն Խեչոյանի «Արշակ արքա, Դրաստամատ ներքինի» վեպ և այլն):

5-րդ դարի պատմագրության գեղարվեստական արժանիքներն առավել ցայտուն դրսևորվել են **Եղիշեի** (410-415-ից մոտ 470-475թթ.) «Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին» երկում: Եղիշեի մատյանը (գրվել է 464 թ. հետո) նվիրված է Սասանյան Պարսկաստանի բռնապետության դեմ ուղղված 451 թվականի ժողովրդական ապստամբությանը, որ պատմության մեջ հայտնի է Վարդանանց պատերազմ անունով: Եղիշեն Վարդան Մամիկոնյանի դպիրն էր, հայոց պատմության վճռորոշ ճակատամարտերից թերևս ամենա-հայտնիներից մեկի՝ Ավարայրի ճակատամարտի մաս-նակից և իր նկարագրած դեպքերին ականատես, որ նա տարբեր առիթներով մերթընդմերթ փաստում է իր պատմության մեջ: Թերևս հիշենք նրա՝ փափկասուն կանանց ու օրիորդներին նվիրված խոսքը, որոնցից շատերին նա «յականէ յանվանէ» (աչքով, այսինքն՝ անձամբ, և անունով) ճանաչում է: Հանուն հայրենիքը ամեն գնով պահելու վեհ նպատակի՝ զորեղ թշնամու դեմ հայերի մղած կռիվն ու նահատակությունը Եղիշեն իմաստավորել է «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է» թևավոր խոսքով, որ այսօր էլ պահպանել է իր արդիական հնչեղությունը:

Թեպետ գրքում առաջնային է պատմաքաղաքական դեպքերը կրոնական հայեցակարգով լուսաբանելը, որ հասկանալի է և պատճառաբանված, այդուհանդերձ մատյանում հեշտ է որսալ ժամանակի կրոնական, քաղաքական-հասարակական կյանքի իրական պատկերները, որոնք սքողված են հեղինակի՝ քրիստոնեական վառ գաղափարախոսության դոգմաներով:

Կրոնական, պատմողական և հուզական տարրերի սերտ գուգակցումը պատմական դեպքերի շարադրանքին Եղիշեի գործին հատուկ գրավչություն և շուք է հաղորդում: Պատմիչը օգտագործել է գրաբարի հարուստ ու պերճ բառազանձը, լեզուն համեմել ասույթներով, որ այսօր էլ կենսունակ են, բացառիկ վարպետությամբ հղկման հասցրել պատմագրի՝ իբրև գեղարվեստական ստեղծագործողի ոճը և լեզվական ինքնատիպությամբ ստեղծել պատմական-գեղարվեստական հզոր կոթող՝ ի տես հետագա դարերի սերունդների: Կարող ենք փաստել, որ Եղիշեի գիրքը հայրենասիրության, ազգային ինքնագիտակցության դրսևորման վառ օրինակ է, որ այսօր էլ իր ազդեցիկությունը չի կորցրել. Այս գիրքը ներշնչանքի աղբյուր է դարձել գրողների համար. բավական է միայն

հիշատակել Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպը, որը 5-րդ դարի ազգային-ազատագրական պայքարը գեղարվեստականորեն պատկերող հիանալի գրական կոթող է:

Հայոց հին պատմագրության դասական շրջանն ավարտվում է **Ղազար Փարպեցու** (մոտ 441-443 թ.- 4-րդ դ. սկիզբ) ստեղծագործությամբ՝ «Հայոց պատմություն» (գրվել է 5-րդ դարի վերջին կամ 4-րդ դարի սկզբին և ընդգրկում է 387-480թթ.), որը հեղինակը գրել է մարզպան Վահան Մամիկոնյանի հանձնարարականով: Փարպեցին արդեն տեսել էր Ագաթանգեղոսի, Բուզանդի, Եղիշեի, հավանաբար նաև Խորենացու գրվածքները, մասամբ օգտվել է բանավոր զրույցներից ու ավանդություններից: Փարպեցին իր շարադրելիք նյութին վերաբերվել է ճշտապահության զգացումով և հետագա սերունդների հանդեպ մեծ պատասխանատվությամբ: Ինչպես ինքն է գրում, պատմական փաստերից պատկառանքով պիտի գրել ստույգը՝ եղածները չպակասեցնելով ու չավելացնելով, չղրսևորել անփույթ կիսատություն: Նա խիստ քննադատաբար է մոտեցել պատմությունը վավերագրելու իր առաքելությանը. ճշտել և համեմատել է պատմական աղբյուրները ու հետո միայն մեջբերել

պատմական փաստերը: Փարպեցին կրթություն է ստացել Բյուզանդիայում, հետագայում առանձնացել է հասարակական-կրթական ու քարոզչական լայն գործունեությամբ, պատկառանք է վայելել, բայց հետագայում ենթարկվել է հալածանքի հետադիմական ուժերի կողմից, ինչը պատճառ է դարձել նշանավոր «Ստախոս արեղաների մեղադրությունը» վերտառությամբ «Թուղթ առ Վահան Մամիկոնյան» ինքնապաշտպանական ուղերձը ստեղծմանը: Պատմաճանաչողական մեծ արժեք ունի նրա «Թուղթը»: Այն հայ հին ճարտասանական արվեստի լավագույն գործերից է՝ հրապարակախոսական-քննադատական մի երկ, որտեղ կենսագրական տվյալների հենքի վրա հեղինակը ամուր տրամաբանությամբ ու վերլուծելու հատու ձիրքով քննում է հասարակական-քաղաքական իրավիճակը, հեզնում ու պախարակում է կղերական հետադիմական ուժերն ու նրանց սնանկ միտքը, իր անձնական օրինակը ընդհանրացնելով՝ խոսում նրանց կողմից առաջավոր մտավորականների ու եկեղեցականների մեծ հալածանքների մասին:

«Հայոց պատմություն» աշխատությունը Փարպեցին սկսել է 387 թվականի իրադարձություններից՝ Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև Հայաստանի

առաջին բաժանումից. ներկայացրել է Սասանյան Պարսկաստանի պառակտիչ քաղաքականությունը մինչև Արշակունյաց թագավորական հարստության անկումը (428 թվական), ավարտել է Սահակ Պարթևի (439 թվական) ու Մեսրոպ Մաշտոցի (440 թվական) մահվանն առնչվող դեպքերի նկարագրությամբ, նկարագրել Վարդանանց պատերազմը, որը համընկնում է Եղիշեի «Վարդանի և Հայոց պատերազմի մասին» երկի ժամանակաշրջանին (ի դեպ, հենց այս համընկնումն է առիթ տվել հայագիտության մեջ այն կարծիքին, թե Եղիշեն է օգտվել Փարպեցուց, և ոչ հակառակը), շարունակել Հայաստանի՝ 460–484 թթ. հայպարսկական փոխհարաբերությունների ու հայերի՝ 482–484 թվականների ապստամբության պատմությունը և ավարտել Վահան Մամիկոնյանի՝ պարսից արքունիքի կողմից հայոց մարզպան ճանաչվելու հիշարժան փաստով: Փարպեցու պատմությունը, այդուհանդերձ, միայն պատմական գործ չէ. բնության գեղեցիկ նկարագրությունները (մանավանդ Արարատյան դաշտի գեղատեսիլ պատկերումը), հյութեղ համեմատություններն ու ոճական այլ միջոցներ, ինչպես նաև հեղինակի մեծագույն հայրենասիրությունը երկը ճանաչել են տալիս որպես

գրական-գեղարվեստական գործ, որն այսօր էլ պահպանում է իր մնայուն արժեքը:

Եզնիկ Կողբացին (մոտ 380- 450 թթ.) 5-րդ դարի հայ իմաստասեր է, թարգմանիչ, հասարակական-եկեղեցական գործիչ: Ծնվել է Կողբ գյուղում (ինչպես շատերի, այնպես էլ Կողբացու անունը այս ժամանակում կապվում է ծննդավայրի հետ), եղել է Մ. Մաշտոցի աշակերտներից: Մովորել է Եղեսիայում: Նրա մասին հիշատակում են Կորյունը, Եղիշեն, Մովսես Խորենացին: Կողբացու աշխատություններից պահպանվել է «Եղծ աղանդոց» («Աղանդների հերքումը») գործը, որ հայ իմաստասիրության կարևոր սկզբնաղբյուրներից մեկն է: Երկը բաժանված է չորս գլուխների (գրքերի), որտեղ հերքվում են հեթանոսական աղանդները, պարսից կրոնը, հին հունական փիլիսոփայական ուսմունքները, հիմնավորվում են քրիստոնեական աշխարհայացքի սկզբունքները: Երկում Կողբացին գտնում է, որ Աստված է միակ մշտնջենական գոյը, որ նա անձանաչելի է, և նրան կարելի է հասնել միայն հավատի միջոցով, և նա էլ ամեն ինչի պատճառն է: Նա քննել է չարի ու բարու հարցերը, գտել է, որ չարը կախված է մարդու գործողությունների: Այս

դիրքերից էլ նա սուր պայքար է մղել աղանդների դեմ, հերքել է հեթանոսական աշխարհայացքը:

3. Մովսես Խորենացի

Հայոց դասական դպրության ուրույն ներկայացուցիչ է Մովսես Խորենացին, ում տրվել են եզակի պատվանուններ՝ քերթողահայր, պատմահայր, տիեզերահռչակյալ: Չնայած Խորենացին թողել է գրական հարուստ ժառանգություն՝ տաղեր, գանձեր, շարականներ, այդուհանդերձ հայ և համաշխարհային պատմագրության, գրականության մեջ նրա անուրանալի վաստակը կապված է իր կոթողային երկին՝ «Հայոց պատմությանը», որով նա ազդել է իր և հետագա ժամանակների ոչ միայն պատմագրության, այլ ազգային մտքի, ազգային ինքնագիտակցության ու դաստիարակության վրա, և որը երկար դարեր ու անգամ այսօր, ինչպես գրել է Ստ. Մալխասյանցը, յուրօրինակ ծննդյան վկայական է հայ ժողովրդի համար: Խորենացին առաջինը խիզախեց գրել մեր ժողովրդի ամբողջական, քննական պատմությունը՝ սկսած հայ ազգի ծագումնաբանության նախապատմական իրադարձություններից մինչ իր ապրած ժամանակաշրջանը՝ ի տարբերություն մյուս պատմագիրների,

որոնց գրի առած պատմությունները մի շրջանի որևէ բախտորոշ իրադարձության մասին են կամ ունեն որոշակի ժամանակագրական շրջանակ: Քննական պատմություն նշանակում է տարբեր աղբյուրների հիման վրա գրված, բայց հեղինակի՝ աղբյուրների հանդեպ ունեցած քննական վերաբերմունքով շարադրած պատմություն: Քերթոդահայրը օգտագործել է 40-ից ավելի մատենագիտական աղբյուր. նա օտար և հայ ձեռագրերը պարտքի բարձր գիտակցումով բաղդատել է, ընտրել տեղեկություններից ճշմարիտն ու հավաստին՝ աշխատելով գրել պատմությունը հստակ ժամանակագրությամբ, քանզի ինչպես ինքն է ասում՝ *«Չկա ստույգ պատմություն՝ առանց ժամանակագրության»*: Թերևս հիշենք աղբյուրներից մի քանիսը՝ Աստվածաշունչը, Հերոդոտոսի, օտարագիր ու հայ պատմագիրների երկերը, Մար Աբաս Կատինայի պատմությունը, «Մեհենական պատմությունները», որոնց հեղինակներ են համարվում Ողյա կամ Ողյումպ քուրմը ու Բարդաձան Եդեսիացին, ժողովրդական բանահյուսությունը և այլն: Այդուամենայնիվ, Խորենացու գիրքը գերծ չէ անաքրոնիզմներից (սխալ ժամանակագրություն), ոչ ճիշտ փաստերից, անգամ հետնամույց հատվածներ

կան, որոնք պատմահոր գրչին չեն պատկանում: Նման վրիպակների պատճառով հայ և օտար բանասիրության մեջ ծնունդ առավ մի շարժում, որի ներկայացուցիչները պատմահորը անվանեցին «պատմությունը խեղաթյուրող», կեղծարար՝ նրա ժամանակաշրջանը համարելով 9-րդ դարը: Սակայն հետագայում նշանավոր հայագետների՝ Ստեփանոս Մալխասյանցի, Մանուկ Աբեղյանի, Մկրտիչ Մկրյանի, Ներսես Ակինյանի, Ալբերտ Մուշեղյանի և այլոց գիտական բազմաթիվ խորաքնին ուսումնասիրությունները, ինչպես նաև հնագիտական պեղումների արդյունքները եկան փաստելու, որ Խորենացին 5-րդ դարի հեղինակ է և ստեղծագործել է նույն դարում:

Իր իսկ գրքի վերջում, ինչպես և առանձին մասերում Խորենացին թողել է կենսագրական նշումներ: Դրանց և Խորենացու մասին եղած մատենագիտական այլ աղբյուրների սակավաթիվ տեղեկությունների հիման վրա կազմվում է Խորենացու կենսագրությունը: Ըստ այդմ՝ պատմահայրը ծնվել է Տարոն գավառի Խորեա կամ Խորոնք գյուղում (այստեղից էլ միջնադարում տարածված կոչման ձևին հարիր Խորենացի անունը): Նա իրեն համարում է Մեսրոպ Մաշտոցի ու Սահակ Պարթևի աշակերտը:

Եփեսոսի կրոնական ժողովից հետո՝ 431 թ., Խորենացուն մի քանի աշակերտների հետ ուղարկում են արտասահման՝ ուսումը կատարելագործելու. նրանք կրթվում են հելլենիստական մշակույթի կենտրոնում՝ Ալեքսանդրիայում, որտեղից Խորենացին հիշում է իր ուսուցչին, որին անվանում է Նոր Պլատոն՝ նեոպլատոնիստական ուսմութի հետևորդներից մեկը: Երբ Խորենացին ընկերների հետ վերադառնալիս է լինում Հայաստան, քամին նավը քշում է դեպի Հռոմ, որտեղից նրանք գնում են Աթենք, ուր, բարեպատեհությունից օգտվելով, պատմահայրը ուսումնասիրություններ է կատարում, այնուհետև վերադառնում են Հայաստան: Խորենացու վերադարձից հետո նրան սառը ընդունելություն էր սպասվում. նա մահացած է գտնում իր սիրելի ուսուցիչներին, իսկ քահանայապետի աթոռին նստած էր պարսկամետ դիրքորոշում ունեցող ոմն Բրքիշո: Պատահական չէ, որ հունական կրթություն ստացած ու Հունաստանը կրթության մայր կամ դայակ անվանող Խորենացին ոչ միայն սառը ընդունելություն է գտնում, այլև թշնամանքի է արժանանում: Դրա մասին է վկայում Ղազար Փարպեցին իր «Թուղթ առ Վահան Մամիկոնյան» գործի մեջ, որտեղ ասում է, որ ենթա-դրենք՝ ինքը մեղք

գործեց, հալածվեց, իսկ փիլիսոփա Մովսեսին ինչու՞ են հալածում. նրան հալածեցին ու նույնիսկ մահվանից հետո էլ ոսկորները հանեցին ու գետը լցրին: Հայագետները գտնում են, որ ոչ մի հիմք չկա երանելի փիլիսոփա Մովսեսին ու պատմահայր Մովսես Խորենացուն միևնույն անձը չճանաչելու, չնայած որ ոմանք, այդ թվում և Արշակ Չոպանյանը, գտնում են, որ Փարպեցու հիշատակած երանելի Մովսեսը, որից, ըստ գրականագետի, ոչ մի գործ չի հասել մեզ, ոչ մի առնչություն չունի Խորենացու հետ³: Իր հանդեպ հալա-ծանքներից քերթողահայրը ապաստան է գտնում երկար տարիների ճգնակեցության մեջ, մինչև նրան մի երե-կույթի ժամանակ ճանաչում է Գյուտ կաթողիկոսը, երբ նա երգում է «Ով արքայակերպ տեր քահանայապետ» մեղեդին: Դրանից հետո Խորենացին վերջապես արժա-նանում է իր վաստակած մեծ հարգանքին. պատահական չէ, որ հենց նրան է հանձարարվում «Հայոց պատմություն» գրել, չնայած որ քրիստոնեական կրոնից առթված խոնարհության ու համեստության պատճառով Խորենացին իրեն արժանի չի համարում, սակայն ընդու-նում է պատվերը՝ գիտակցելով

³ «Անահիտ», Փարիզ, 1931, Գ տարի, թիվ 3-4, էջ 9:

անելիք գործի պատասխանատվության ողջ ծանրությունը: «Հայոց պատմութ-յունը» քերթողահայրը գրել է երկրի մարզպան Սահակ Բագրատունու պատվերով, ոչ ուշ քան 482 թվականը, քանի որ պատմությունն ասում է, որ մարզպանը սպանվել է 481 թվականին նետի անզգույշ հարվածից (իր մեկենասի մասին մեծ հարգանքով խոսող Խորենացին այս փաստի մասին լռել է, ինչը հիմք է տալիս կարծելու, որ «Հայոց պատմությունը» այդ թվականին արդեն ավարտված էր): Պիտի կարծել, որ Բագրատունին շատ զարգացած մարդ է եղել և երևի ոչ միայն պատվեր է տվել, այլև որոշ գաղափարներ երկի գրման մասին:

Խորենացու Հայոց Պատմությունը

Խորենացու «Հայոց Պատմություն» գիրքը կազմված է երեք գլխից, որոնցից յուրաքանչյուրը ունի իր վերնագիրը: 1-ին գլուխը կոչվում է «Ծննդաբանություն հայոց մեծաց», 2-րդը՝ «Միջին պատմություն մեր նախնիների» և 3-րդը՝ «Մեր հայրենիքի պատմության ավարտը», գրքի վերջում զետեղված է «Ողբը»: Այս կառուցվածքը ինքնանպատակ չէ. այն միտված է ցույց տալու սեփական ազգի տոհմագրությունը,

ծննդաբանությունը, նշելու, որ հայ ազգը Նոյին ժամանակակից նախահայր ունի, որի ծննդյան փաստը ամրագրված է բոլոր ժամանակիների գրքում՝ Աստվածաշնչում: Խորենացին, չունենալով հայերի ծագումնաբանության մասին որևէ հավաստի աղբյուր, դիմում է առասպելաբանությանը, միաժամանակ հայերի ծնունդը դիվանագիտորեն կապում Աստվածաշնչյան հայտնի առասպելի՝ Բաբելոնյան աշտարակաշինության հետ՝ ապացուցելով, որ Հայկը և Բելը Աստվածաշնչում հիշատակված նույն տիտաններ էին, որոնք ճգնում էին աշտարակ կառուցել՝ Աստծուն հասնելու համար:

Ժողովրդական բանահյուսության նկատմամբ ունեցած վերաբերմունքը ցույց է տալիս Մովսես Խորենացու մտածողության խոր շերտերը: Նա գտնում է, որ առասպելները իրենց մեջ այլաբանորեն են թաքցնում ճշմարտությունը: Եվ օգնության ձեռք պարզելով առասպելներին, ավանդություններին, վիպական ասքերին՝ Խորենացին չի մեջբերում այնպես, ինչպես կան, այլ մեկնում, քննում և հատվածաբար է ներկայացնում՝ ուղեկցելով իր՝ երբեմն կողմնակալ վերաբերմունքով, պատմական իրողությունների հաստատման կամ ժխտման մոտեցումով, ռացիոնալիստական

մտածողությամբ: Այս առումով հետաքրքիր օրինակ է Շամիրամի առասպելի մեջբերումը: Պատմահայրը, նկարագրելով Շամիրամի մահը, մեջբերում է տարբեր կարծիքներ այս առթիվ, բայց հավելում, որ իր կարծիքով ավելի հավանական է Շամիրամի՝ Հայաստանում մեռնելու փաստը: Գուցե ճիշտ չէ Խորենացին, բայց որտեղի՞ց կարող էր գոյանալ *«Ուլունք Շամիրամայ ի ծով»*⁴ արտահայտությունը Վանա լճի շրջակայքում՝ Ասորեստանից բավականին հեռու: Քննական այսպիսի մոտեցումով առասպելների մեջբերումները ևս շահեկանորեն առանձնացնում են պատմահոր աշխատությունը պատմագեղարվեստական այլ գործերից:

Խորենացին գտնում է, որ պատմություն վավերագրելը և այն սերունդներին ի պահ թողնելը քաղաքակրթությանը նպաստող գործոններ են: Պատմության նկատմամբ այս դիրքորոշումը ծնվել է նրա՝ հայ իրականության հանդեպ ձևավորված հայացքներից. պատմական ճակատագրի լաբիրինթոսում խարխափող ժողովուրդը ուղիներ էր որոնում և, ինչու չէ, կառչում էր պատմական փորձերից:

⁴ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 125:

Խորենացու՝ որպես պատմիչի գիտական ու ռացիոնալ մտածողությունը երևում է նաև նրա համարձակ վերաբերմունքից առ Սուրբ Գիրքը, որը, ըստ ժամանակի մտածողության, բոլոր ճշմարտությունների ակունքն էր: Պատմահայրը Աստվածաշունչը համեմատում է մյուս պատմիչների պատմությունների հետ և սթափ մտքով իր պատմություն ներմուծում այնպիսի տեղեկություններ, որոնք չկան Սուրբ Գրքում:

Մ. Խորենացին ոչ միայն գրեց հայ ժողովրդի ամբողջական պատմությունը, բնութագրեց իր ժողովրդի անցած ճանապարհը այլև իր գրքում տարփողեց ազգագիտության նպատակը, մեր ժողովրդի կառուցողական փիլիսոփայությունն ու ազգի հիմնային մտածողությունը: Հարկ է նշել, որ պատմիչների շարքում դժվար է մատնանշել նման երկրորդին, որ այսպիսի կառուցիկ, բազմաշերտ ու խոր պատմահամեմատական քննությամբ գործ է ստեղծել: Խորենացու՝ որպես պատմիչ-մտածողի «Պատմության» փիլիսոփայությունը հաս-ցեագրված է ոչ թե անցյալին, այլ իր ազգի ներկային ու ապագային: Այս եզակի փիլիսոփայության բանալին տվել է ինքը՝ հեղինակը. «Թեպետ մենք փոքր ածու ենք և թվով շատ սահմանափակ ու զորությամբ թույլ և շատ անգամ օտար

թագավորությունների կողմից նվաճված, բայց և այնպես մեր աշխարհում էլ գրելու և հիշատակելու արժանի շատ սխրագործություններ են կատարվել»⁵: Խորենացին խորապես գիտակցում է, որ իր ազգը պատմության թատերաբեմի վրա տկար է, մեծաքանակ չէ և շատ անգամ նվաճված, բայց և արժանի սեփական պատմության հզոր վավերագիր ունենալու: Վերոնշյալ միտքը պայմանավորել է նրա «Հայոց պատմության» քաղաքացիական վիթխարի լիցքը ու հայրենասիրական պաթոսը, նրա պատմական հայեցակարգի հիմնական սկզբունքները, որ ի հայտ են գալիս գլուխներում առանձին-առանձին: Խորենացին նպատակ էր հետապնդում պատվաստել հայ քաջորդիների մեջ ազգային ինքնագիտակցության և ազգային իրավահավասարության, ազգային ազատագրական մաքառման գաղափարներ, որոնց մշակման հարցում նա ապավինում է հայոց ազգի ծննդաբանությանը, տոհմագրությանը՝ շատ հաճախ ստիպված քննելով դրանք ժողովրդական բանահյուսության ակունքներից, ու առասպելների հերոսների անունները կապում է աշխարհագրական

⁵ Նույն տեղում, էջ 96:

տեղանունների հետ՝ Հայկ-Հայք, Երաստ-Երասխ, Գեղամ-Գեղարքունիք, Սիսակ-Սյունիք և այլն:

Խորենացու պատմական հայեցակարգի մյուս կարևոր սկզբունքը հայերի՝ մյուս ազգերին հավասար լինելն է, որ երբեմն հասնում է հայերի ազգային ինքնագիտակցությունը շոյելուն անգամ: Օրինակ՝ Խորենացին գրում է, որ ինքը կուզեր, որ Ջարմայր նահապետը, որը ճակատամարտի ժամանակ վիրավորվել էր անհայտ ինչ-որ մեկի նետից, վիրավորված լիներ Աքիլլեսից⁶:

Պատմական հայեցակարգի մյուս կարևոր սկզբունքը հայոց պետականության վերականգնումն էր: Խորենացին միշտ, ամեն առիթով հասկացնել է տալիս, որ հայ ազգի համար դառն էր պետականության կորուստը, և շոշափելի է համարում այն վերականգնելու գաղա-փարները: Պատմահայրը շատ հաճախ փնտվում է քրիստոնյա թագավորներին և հակառակը՝ մեծ համակրանքով է խոսում հայ հեթանոս արքաների մասին, նրանց ռազմական տաղանդը դրվատելու հետ միասին ընդգծում սոցիալ-տնտեսական քաղաքականության հաջողվածությունը, հանդես բերում նրանց որպես իդե-

⁶ Նույն տեղում, էջ 143:

ալատիպեր՝ այն մոտեցումը դրսևորելով, որ այս թագավորների՝ Երվանդյան Տիգրանի, Արամի, Արա Գեղեցիկի, Արտաշեսի և այլոց օրոք կար պետականություն: Քրիստոնյա պատմագիրը չի երկնչում իր ցանկությունից՝ գտնելով, որ ավելի լավ կլիներ, որ ապրեր այդ թագավորների օրոք: «Մեր թագավորության մեջ այս մարդիկ են ինձ սիրելի և շատ կփափագեի, որ նրանց ժամանակ ծնված լինեի ու այս վտանգներից խուսափեի»⁷:

Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» հայրենասիրության յուրօրինակ դասագիրք է եղել դարեր շարունակ, բազմաթիվ սերունդներ կրթվել են այս գրքով և քաղել հայրենասիրության դասեր:

Խորենացու գիրքը մեր պատմագրության ամենամեծ գիրքը լինելուց զատ հանապազօրյա գրականություն է, հայ պատմական-գեղարվեստական արձակի խոշորագույն ստեղծագործություններից: Դարերի հեռվից Խորենացին գրուցում է մեզ հետ, մեր նախնիների հավատալիքները գեղագիտական ճաշակի հազվագյուտ նրբությամբ մեզ հասցնում: Բացառիկ են Խորենացու գրքում բազմաթիվ գեղեցիկ նկարագրությունները՝ Արա-րատյան դաշտի,

⁷ Նույն տեղում, էջ 130:

Վանա ծովի, Աժդահակի երազը, Եր-վանդակերտի նկարագրությունը: Խորենացին գործածել է փոխառյալ կամ ինքնաստեղծ արտահայտություններ, որոնք շքեղացնում են մատյանը: Նրա գրքի առանձին նախադասություններ դարձել են թևավոր ասույթներ, և այսօր էլ դրանք շարունակում են արդիական մնալ՝ *«Մահկանացուների ժամանակը կարճ է ու անհայտ»*, *«Քաջերի սերունդները քաջեր են»* և այլն:

Մի առանձին արժեք ունի «Հայոց պատմության» վերջում գետեղված «Ողբը», որը միջնադարի հռետորական արվեստի փայլուն նմուշներից է: Այն չի կարելի կտրել «Պատմությունից» ու առանձին, ինքնակա գործ համարել: «Ողբը» մեծ հայրենասերի բողոքի ճիչն է՝ ընդդեմ հայրենիքի ու իր անձնական ճակատագրի, նրա մեջ անձնական հենքի վրա շարադրված են պատմահոր հասարակական-քաղաքական մտորումները, միևնույն ժամանակ այն լավատեսական ողբ է, որի բուն նշանակությունը հուսահատությունը չէ, այլ հավատը ապագայի հանդեպ: «Հայոց պատմությունը» մեծ ազդեցություն է թողել հայ պատմության, փիլիսոփայության, գեղարվեստական գրականության ու ազգային ուրույն մտածողության զարգացման վրա:

Հետագա դարերերի հայ գրականության մեջ Խորենացու «Հայոց պատմության» թեմաների գեղար-վեստական մշակումները բազմազան են. հիշենք մի քանիսը՝ Դանիել Վարուժանի «Հարճը», Նաիրի Զարյանի «Արա Գեղեցիկ», Եղիշե Չարենց «Վահագն» պոեմները, Հրայրա Հովհաննիսյանի «Վահագնի ծնունդը» բանաստեղծությունը և այլն:

Երկի բնագիրը լույս է տեսել բազմիցս, թարգմանվել է ռուսերեն, ֆրանսերեն, լատիներեն, իտալերեն, գերմաներեն, հունգարերեն, անգլերեն, վրացերեն, պարսկերեն, արաբերեն և այլ լեզուներով: Ավելորդ չէ նշել նաև, որ քերթողահայր Մովսես Խորենացին այն եզակի մշակութային գործիչն է, որի մասին գրվել և գրվում են բազմազան ուսումնասիրություններ. այսօր արդեն դրանց թիվ մոտ 3 հազար է:

4. Հայ գրականությունը 6- 10-րդ դարերում

5-րդ դարից հետո պատմագրությունը անկում ապրեց, կարծես փոխարենը որոշակի զարգացում ստացավ դավանաբանական գրականությունը, իսկ աշխարհիկ գրականություն, որպես այդպիսին, դեռ չկար: Իհարկե,

նպաստավոր չէին նաև հայ քաղաքական-հասարարական կյանքի պայմանները, քանի որ Հայաս-տանը, ազատվելով Պարսկաստանի ազդեցության ոլոր-տից, անցել էր ու դեռ գտնվում էր Արաբական խալիֆաթի տիրապետության տակ, որ օրըստօրե ծանրացնում էր լուծը հարկերով ու բազմապիսի ճնշումներով: 7-րդ դարում սկսում են զարգացում ապրել բնական ու ճշգրիտ գիտությունները, և Հայաստանը դառնում է այդ գիտութ-յունների օջախը: Այս շրջանի ճշգրիտ գիտությունների ասպարեզում մեծ վաստակ ունի Անանիա Շիրակացին, որ որը ծավալել է գիտամանկավարժական գործունեություն, գրել դասագիրք, պատմական, աշխարհագրական ուսումնասիրություններ, տեղյակ է եղել աշխարհի գնդաձև լինելու փաստին, աստղաբանության գաղտնիքներին և այլն: Նա, ընդունելով աստվածաշնչյան դոգմաները, աշխատել է ընկալել, հասկանալ բնության ինչ-ինչ երևույթներ բանականության ուժով. այսպիսի մտածելակերպը միայն մի քանի դար անց պիտի հասու լինել եվրոպական մտավորականներին:

Այս շրջանում պատմագրությունը ևս որոշակի առաջ-ընթաց է ապրել. 7-րդ դարից հայտնի են պատմագիրներ Սեբեոսը և Հովհան Մամիկոնյանը, 10-րդ դարից՝ Մովսես

Կադանկատվացին, Թովմա Արծրունին, Հովհաննես Դրասխանակերտցին, Ղևոնդը: Այս դարերի պատմագրությունը, ճիշտ է, զարգանում է յուրովի, սակայն բոլոր դեպքերում որպես ուղեցույց է ծառայում 5-րդ դարի պատմագրության ավանդները: Այս դարերի պատմիչների գործերում հուզիչ կերպով նկարագրված են օտար զավթիչների հարստահարությունները և ավերա-կիչ ասպատակությունները, հայերի՝ ազատագրական պայքարի որոշ մանրամասներ, ինչպես նաև երկրի ներքին կյանքն ու կենցաղը: Ճիշտ է, պատմագրական այս գործերը ևս, էական նշանակություն չունենալով հանդերձ, նպաստել են գեղարվեստական արձակի զարգացմանը: 6-10-րդ դարերի հայ գեղարվեստական գրականությունը հիմնականում ամփոփված է եկեղեցական բանաստեղծության ժանրերի շրջանակում. գրվել են տաղեր, գանձեր, շարականներ, ողբեր, որոնք հեղինակել են Կոմիտաս կաթողիկոսը, Դավթակ Քերթողը, Սահակադուխտը, Հովհաննես Օձնեցին և այլք:

Այս շրջանում է ծագել ու զարգացել նաև «Սասունցի Դավիթ» էպոսը, որ արաբական Խալիֆաթի դեմ հայ ժողովրդի՝ ի դեմս սասունցիների, ազգային ազատագրական հերոսական պայքարի գեղարվեստական

արտացոլումն է: Ժողովրդի պայքարն ընթանում էր մի կողմից օտար զավթիչների լծի, մյուս կողմից՝ եկեղեցու վարած կործանարար քաղաքականության դեմ, որ հասարակ ժողովրդին ի վերջո լարում էր սեփական եկեղեցու դեմ: Այս ամենի հետևանքով 10-րդ դարում ծնունդ առավ աղանդա-վորական հզոր շարժում՝ Թոնդրակյան շարժումը, որ հիմքում հայ հասարակ ժողովրդի դժգոհությունն էր սիրող իրավիճակից: Շարժումից անմասն չմնացին անգամ իշխանական ու մտավորական խավերի շատ ներկայացուցիչներ: Հենց այս շարժմանը հարելու համար են ժամանակին մեղադրվել Գրիգոր և Անանիա Նարեկացիները: Չնայած մեծ ուժով շարժումը ճնշվեց, բայց դրա գաղափարները դեռ երկար ժամանակ մարմրում էին ժողովրդի գիտակցության մեջ:

10-րդ դարում ավելի աշխուժացավ աշխարհիկ կյանքը, զարգացավ քաղաքաշինությունը, հատվեցին դրամներ, ծաղկում ապրեց առևտրային շրջանառությունը, զարգացան արվեստի ճյուղերը՝ ճարտարապետություն, մանրանկարչություն, գրականություն, թատրոն և այլն: Ուսումնասիրողները այս շրջանի մասին երկու կարծիք ունեն. ոմանք այն համարում են հայկական Վերածնունդ, մյուսները կարծում են, որ այն ընդամենը աշխարհիկ

կյանքի բուռն զարգացում է, որն անշուշտ պիտի ունենար իր նախադրյալները, պատճառներն ու հետևանքները:

Այս շրջանի քերթողական արվեստի հանճարեղ ներկայացուցիչն է Գրիգոր Նարեկացին:

5.Գրիգոր

Նարեկացի

Գրիգոր Նարեկացին հայ միջնադարյան գրակա-նության ականավոր ներկայացուցիչ է, որը ոչ միայն իր ժամանակի, այլև առ այսօր հայ և համաշխարհային գրականության մեջ մնում է անգերազանցելի քերթողների շարքում: Պատահական չէ, որ այսօր՝ 21-րդ դարում՝ իր ապրած ժամանակից տասնմեկ դար անց, Հռոմի Ֆրանցիսկոս պապի կողմից նա հռչակվեց *«Տիեզերական եկեղեցու վարդապետ»*՝ թվով 36-երորդը: Սա ապացուցում է, որ Նարեկացին ոչ միայն իր ժողովրդի, այլև համաշխարհային մշակույթի բացառիկ դեմքերից մեկն է: Նարեկացին ապրել ու ստեղծագործել է 10-րդ դարում: Նրա կենսագրության մասին տեղե-կություններ բանասերները քաղում են իր իսկ ստեղծագործություններից, ժողովրդական ավան-դազրույցներից, Հայսմավուրքից: Մեծանուն գիտնական Մ. Աբեղյանը, նրա հետևությամբ գրականագետ Վաչե Նալբանդյանը համարում են, որ Նարեկացին ծնվել է 10-րդ

դարի 40-ական թվականներին⁸, չնայած որ Միքայել Չամչյանը Նարեկացու ծնունդը համարել է 951 թվականը, որն այսօր էլ ընդունված է դասագրքերում: Ըստ քաղված տեղեկությունների՝ Նարեկացին եղել է Անձևաց նահանգի հոգևոր առաջնորդի՝ Խոսրով Անձևացու որդին: Հոր մասին նա վկայում է «Երգ երգոցի մեկնություն» գործի հիշատակարանում: Բավական վաղ հասակում է մահացել Խոսրովի կինը՝ թողնելով երեք որդիներին, որոնցից երկուսին՝ Գրիգորին ու Հովհաննեսին, հայրը կնոջ մահից հետո տարել է Նարեկա վանք՝ ուսանելու Անանիա Նարեկացու մոտ, որ իր կնոջ հորեղբոր որդին էր: Մյուս որդու՝ Սահակի մասին այլ հիշատակություններ չկան. Վ. Նալբանդյանը կարծում է, որ նա հավանաբար մահացել էր արդեն: Նարեկա վանքում Գրիգորն ու Հովհաննեսը կուսակրոն են ձեռնադրվել և իրենց ողջ կյանքը անցկացրել այնտեղ: Վանքում էլ ուսումնառելով՝ Գրիգոր Նարեկացին հասել գիտական ու մտավորական բարձր աստիճանի: Նրա համբավը տարածվել է շրջա-կայքում, և շատ շուտով՝ ընդամենը 21 տարեկան հասակում, նրան հանձնարարվել է գրել «Երգ երգոցի» մեկնությունը: Հեղինակի

⁸ Վաչե Նալբանդյան, Գրիգոր Նարեկացի, Երևան, 1990, էջ 15-16:

ընտրությունը և Աստվածաշնչի՝ Հին կտակարանի գրքի, որ վերագրվել է հրեական հայտնի թագավոր Սողոմոնին, ընտրությունը պատահական չէին: Ժողովուրդը շարունակում էր «Երգ Երգոցը» ընկալել այնպես, ինչպես այն գրված էր. այն արտաքուստ Սողոմոնի և նրա դեռատի սիրուհու սիրո պատմությունն է, որն ուղեկցվում է մարմնական գեղեցիկ բարեմասությունների գովքով ու սիրո արբշիռ տեսարանների նկարագրությամբ: Այսպես օրինակ՝

10 Ես իմ սիրականիսն եմ

Եւ ան ինծի կը բաղձայ:

11 Եկո՛ւր, իմ սիրականս, դաշտը ելլենք,

Գիշերը գիտերու մէջ անցընենք,

12 Առտու կանուխ այգիները երթանք

Ու տեսնենք թէ որթատունկը

ծլե՞ր է, ծաղիկը բացուե՞ր է

Եւ նոնենիները ծաղկե՞ր են:

Հոն իմ սէրս քեզի պիտի տամ:

(Երգ 7:11-12)⁹

⁹ Աստվածաշունչ, Բեյրութ, 1985, էջ 862:

կամ

⁶Զիս քու սրտիդ վրայ կնիքի պէս,

Քու բազուկիդ վրա կնիքի պէս դիր.

Վասն զի սէրը՝ մահուան պէս զօրաւոր

Ու նախանձր գերեզմանի պէս

Խիստ է: (Երգ 8:6)¹⁰

Եվ Նարեկացին՝ որպէս ժամանակի ուսյալ մարդկանցից մեկը, նման երիտասարդ տարիքում ձեռնամուխ է լինում այն մեկնելու գործին և հաջող իրականացնում այն, ապացուցում ժամանակակիցներին ու հաջորդ սերունդներին, որ հարսի ու փեսայի սիրո պատմությունը իրականում ձոն է եկեղեցի ու Քրիստոս միությանը և Մեսիայի գալստյանը:

Գրիգոր Նարեկացին մահացել է իր նշանավոր «Մատյան ողբերգությունը» ավարտելուց մեկ տարի անց՝ 1003 թվականին, և թաղվել Նարեկա վանքում. գերեզմանը մինչ 1915 թվականը եղել է սրբատեղի հայության համար:

Նարեկացին կյանքի օրոք արդեն վայելել է բանիմաց մարդու և իմաստասերի համբավ: Նրա մասին ժողովուրդը հյուսել է ավանդություններ, որոնցում երևան են

¹⁰ Նույն տեղում, էջ 862-863:

գալիս նրա՝ սրբի ու սրբակենցաղ կյանքի մասին վկայումները: Ըստ այդպիսի մի ավանդության՝ Նարեկացուն մեղադրել են հերձվածողության մեջ: Զրույցը պատմում է, որ երբ վանականները եկել են Նարեկացուն դատարան տանելու, տեսել են, որ նրա սեղանին խորոված աղավիններ են դրված: Քանի որ օրը պահք էր, ուստի Նարեկացու զանցանքը՝ որպես ակներև մեղանշում եկեղեցու կանոնադրության դեմ, վանականների համար այն առիթ է դառնում հերձվածողության ապացույցի: Ամեն ինչ փոխվում է հրաշքով. Նարեկացին աղոթում է, ու աղավինները թև են առնում, թռչում: Այս հրաշքը տեսնելով՝ վանականները ձեռնունայն վերադառնում են, պատմում սրբի գործած արարքների մասին ու այնուհետ հանգիստ թողնում նրան¹¹: Այս և հար հրաշքները ևս մեկ անգամ գալիս են փաստելու, որ Նարեկացին՝ որպես սուրբ, և նրա մահից հետո անգամ նրա գերեզմանը՝ որպես սրբատեղի, երկյուղածորեն պաշտվել են ժողովրդի կողմից: Նույն պաշտամունքը տարածվել է անշուշտ նրա կոթողային երկի՝ «Մատյան ողբերգության» վրա, որ ժողովրդի կողմից անվանվել է «Նարեկ» ու իր ստեղծման ժամանակից առ

¹¹ Վաչե Նալբանդյան, Գրիգոր Նարեկացի, էջ 27-28:

այսօր պաշտվում է Աստվածաշնչի նման ու որպես
բալասան դրվում հիվանդների սնարի մոտ:
Գրիգոր Նարեկացին իբրև գրական ժառանգություն
թողել է տաղեր, գանձեր, շարականներ, մեկնություններ և
«Մատյան Ողբերգության» չափածո ստեղծա-
գործությունը: Վերջինս շարունակվում էր համարվել
աղոթք մինչ այն պահը, երբ հիմք է դրվում բուն
նարեկացիագիտությանը: 19-րդ դարի վերջերին՝ 1895
թվականին, առաջիններից մեկը հայ գրականագետ,
բանաստեղծ, հրապարակախոս Արշակ Չոպանյանն էր, որ
«Ծաղիկ» հանդեսում, հետագայում «Գրիգոր Նարեկացի»
ուսումնասիրության¹² մեջ քննում է Նարեկացու
«Մատյանը» և ապացուցում, որ այն ոչ միայն
աղոթամատյան է, այլև բանաստեղծություն, որը իր տեղն
ունի ոչ միայն հայ գրականության, այլև համաշխարհային
գրականության անդաստանում՝ որպես բանաս-
տեղծական եզակի կոթող: Այնուհետև սկսվում է
բազմաթիվ ուսումնասիրությունների գործընթացը, որն առ
այսօր էլ կանգ չի առել: Հիշենք նարեկա-ցիագիտության
երախտավորներին՝ Մանուկ Աբեղյան, Մկրտիչ Մկրյան,

¹² Արշակ Չոպանյան, Երկեր, Երևան, 1988, էջ 297-322:

Վաչե Նալբանդյան, Զավեն Ավետիսյան և այլք: Ավելորդ չէ նշել, որ Նարեկացու ստեղծագործությունների մասին արտահայտվել են հայ և օտար շատ բանաստեղծներ ու գրողներ, մշակույթի երախտավորներ: Դժվար է օբյեկտիվ գնահատել Նարեկացու ստեղծագործությունները, եթե վերանաք այն հանգամանքից, որ նա հակասական շրջանի բանաստեղծ է: Մի կողմից միստիցիզմին հասնող կրոնական անխառն ոգի, մարմնի իրավունքը, աշխարհիկ վայելքները մերժող ասկետական մտածողություն, մյուս կողմից եկեղեցու կարգերը մերժող, կրոնական դոգմաները բացառող հերետիկոսական հզոր շարժում, մարմնի իրավունքի առաջնությունը հաստատող քարոզ, քաղաքային կյանքի հետևանքով իրական աշխարհը վայելելու, ըմբռնելու, հետզհետե գորացող բուռն ձգտում ու մտայնություն: Ահա այս դարաշրջանի ծնունդ է Նարեկացին, որ իր վրա է կրում նաև դարի կնիքը, և այն չէր կարող իր ազդեցությունը չունենալ նրա ստեղծագործությունների վրա և պայմանավորել այդ ստեղծագործությունների ներքին հակասականությունն ու կյանքի գեղարվեստական արտացոլման գեղագիտական սկզբունքները: Նարեկացին, կրելով նաև իր նախորդների գաղափարները, փշրեց

հոգևոր երգերի կաղապարված ասելիքն ու ավանդական մոտեցումները՝ հոգևորի ոլոր-տից քերթողական՝ բանաստեղծական արվեստը դուրս բերելով: Ճիշտ է, ասվածով փորձ չի արվում նսեմացնել հոգևոր երգի արժեքը, քանի որ սկսած 5-րդ դարից այս ժանրը իր կայուն ու վճռական դերը ամրապնդել էր գրականության ու կրոնի մեջ, այդուհանդերձ Նարե-կացին հոգևոր երգը հասցրեց նոր բարձունքի՝ դրանք երկնելով նոր չափանիշներով: Ամենից առաջ, Նարե-կացին իր տաղեր բերեց մարդուն ու բնությունը: Սա արդեն իր ժամանակի համար մեծ հերոսություն էր: Մարդը հանդես է գալիս ոչ թե որպես գաղափարանիշ, այլ որպես Աստծո ստեղծած հրաշագեղ աշխարհի մի կատարյալ մասնիկ՝ իր զգացումների ողջ գրավչությամբ: Նարեկացու պոեզիան ամենից առաջ մարդերգություն է:

Նարեկացու

տաղերը

Նարեկացուց պահպանվել են շուրջ երկու տասնյակ տաղեր, որոնք մեզ հասել են կրոնական վերնագրերով. դրանք առավել հաճախ եկեղեցական տոների

անվանումներ են՝ «Մեղեդի Ծննդյան», «Տաղ Հարութ-յան», «Տաղ Վարդավառի», «Տաղ Ավետիսի» և այլն: Կարծիք կա, որ տաղերի վերնագրերը ոչ թե դրվել են Նարեկացու կողմից, այլ ետնամույց են, դա գուցե արվել է, որ այս տաղերը չոչնչանային հետագա օրինակիչների կողմից, քանի որ աշխարհիկ տարրեր կային այդ գործերում: Տաղերի վերջին տողերը, ըստ այդ մոտեցումն ունեցած ուսումնասիրողների, ևս ետնամույց են: Ըստ մյուս խմբի կարծիքի՝ այս վերնագրերն ու կրոնական-մեկնական բնույթի վերջատողերը հեղինակել է Նարեկացին՝ միտումով, որ իրեն կրկին չմեղադրեն աշխարհիկ մտայնություն ունենալու համար: Այսպես թե այնպես, այսօր մենք ունենք այդպիսի կառուցվածքով տաղեր, որոնց վերնագրերից չի ածանցվում բուն բովանդակությունը: Նարեկացին իր տաղերով պոեզիա է բերել մարդու և բնության արտաքին նկարագիրը, շեշտել մարդու արտաքին ողջ գեղեցկության հրաշալի ներդաշնակությունը, ներբողել աշխարհիկ գեղեցկությունները: «Մեղեդի Ծննդյան» տաղում թվում է՝ մենք ականատես ենք լինելու Քրիստոսի ծննդյան հրաշափառ իրականությանը, այնինչ այս ստեղծագործությունը ընդամենը Մարիամ Աստվածածնի գեղաշուք պատկերի

բանաստեղծական արտահայտությունն է: Թվում է՝ այս տաղում կենդանություն է առել Տիրամայրը և նմանվել ոշտունյաց մի գեղեցկուհու: Ուշագրավ է տաղը և նրանով, որ Նարեկացին հայ գրականության պատմության մեջ առաջին անգամ օգտագործել է լեզվի պատկերավորման այնպիսի միջոցներ, ինչպիսիք են առձայնությը (ասունանս) և բաղաձայնությը (ալիտերա-ցիա)՝ խոսքին ձայնային երանգներ հաղորդելու համար: Ու իրոք «Աչքն ծով ի ծով ծավալանայր յառաւոտուն» արտասանելիս կարծես լսելի է ծովի ալիքների ծփանքի ձայնը:

Մարդու մեկ այլ նկարագրություն կա նրա մյուս գործում՝ «Տաղ Հարության», որը հետագայում անվանվել է «Սայլիկ»՝ հաշվի առնելով տաղում պատկերվող, Մասիսի փեշերից բարձված իջնող սայլիկի պատկերը: Այս տաղում ևս, ինչպես վերոհիշյալում, վերնագիրը և ստեղծագործության բովանդակությունը կապված չեն իրար հետ: Սա, ինչպես հաղորդվում է մեկնական բնույթի երկտող վերջաբանում, Հովհաննես Մկրտչի պատկերն է, իսկ սայլը, նրա սոնիների մանուշակները, սայլի չորս կողմերը իրենց կրոնական այլաբանություն-մեկնություններն ունեն: Առավել հիշարժան է տաղում պատկերվող տղամարդու կերպարը, որը կարծես իրական գյուղացի լինի, որ խոտը սայլով

սարերից իջեցնում է ցած. «Այն ճորտն ճոճ էր ու ճապուկ, ուռա-միջակ, հաստաբազուկ, լայնաթիկունք, խարտիշագեղ, ահեղնագոչ...»¹³: Վերածնության գաղափարները արտա-հայտվել են նաև Նարեկացու՝ իրական աշխարհի, բնության նոր ընկալումով, մեկնաբանությամբ. պատահական չեն բնության գովքը և դրա գեղեցկության պատկերման բազմազանությունը: Մինչ Վերածնունդը բնության պատկերումը, մեղմ ասած, մերժելի էր ոչ միայն գրականության մեջ, այլև արվեստի մյուս ճյուղերում: Վերածնունդը բեկանեց այդ մոտեցումը. թերևս կարող ենք հիշել Գագիկ Արծրունու կառուցած Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու զարդաքանդակները, որոնք վերածննդյան ժամանակաշրջանի լավագույն արտացոլումն են: Եկեղեցու պատերին առօրյա կյանքի բազմաթիվ տեսարաններ են՝ հողագործություն, երկրագործություն պատկերող տեսարաններ, խաղողի որթեր, ինչպես նաև դիմակներ, որ ցույց են տալիս հայ թատրոնի զարգացման աստիճանը այդ ժամանակաշրջանում: Անգամ Գագիկ թագավորի և Հիսուս Քրիստոսի որմնաքանդակները բավական պերճախոս են:

¹³ Հայ միջնադարյան քնարերգություն, Երևան, 1996, էջ 88:

Նրանք իրար հավասար են, ինչը ցույց է տալիս, որ աշխարհիկ մտածելակերպը բավականին խորն էր թափանցել մշակույթ: Ահա այսպիսի պատկերային մտածողություն ենք տեսնում և Նարեկացու «Տաղ Վարդավառի» ստեղծագործության մեջ, որտեղ բնության սքանչելի տեսարանի գովերգումն է շքեղ բառերով ու պատկերավորման գողտրիկ միջոցներով: Ի դեպ, հեղինակը այստեղ էլ է կիրարկել առձայնույթն ու բաղաձայնույթը: «Գոհար վարդն վառ առեալ ի վեհից վարսիցն արփենից: Ի վեր ի վերայ վարսից ծաւալէր ծաղիկ ծովային...»¹⁴: Վ և ծ բաղաձայնների ու, ա և ի ձայնավորների կուտակումը ստեղծում է ակնապարար տեսարան. արևի վառ շողերի ներքո ծավալվում են ծաղկի և այնուհետև պտղի գեղաշուք գույները՝ առաջ բերելով ծիածանվող գույների նրբերանգների խասողտուն տեսապատկերներ:

Բնության նորովի գնահատման պատկերներ են նաև «Տաղ Հայտնության», «Տաղ Ավետիսի» ստեղծագործությունները, որոնցում բնության ճոխ ու հուռթի տեսարանների նկարագրությունները հաջորդում են իրար: Այս ամենով կարող ենք հավաստել, որ 10-րդ դարում

¹⁴ Նույն տեղում, էջ 89:

Գրիգոր Նարեկացու տաղերը վերափոխիչ, նորարարական շեշտադրումներով շրջադարձային նշանակություն ունեցան հայ գրականության համար: Անշուշտ, Նարեկացու հանճարը փայլատակեց նրա կոթողային երկում՝ «Մատյան ողբերգության» ստեղծագործության մեջ: Պոեմը բաղկացած է 11000 տողից և 95 գլխից, որոնցից յուրաքանչյուրը սկսվում է «Բան ի խորոց սրտի խոսք ընդ աստուծոյ» տողերով: «Մատյանը» քնարական պոեմ է, որտեղ առանցքը մարդն է իր ներհակ կերպարով, մեղքի հավիտենական խարանով ու փրկության հավերժական ձգտումով: Եթե տաղերում երևան է գալիս մարդը իր արտաքին նկարագրությամբ, ապա «Մատյան ողբերգության» գործում ամբողջ խորությամբ պատկերված է մարդը իր հոգեկան ապրումներով ու ներքին բովանդակությամբ: Զգացմունքների փոթորկոտ քառսում արտաքուստ թվում է, թե երկը չկանոնակարգված զգացումների հեղեղ է, սակայն ուշադիր աչքը մեծ մտածողի հոգեկան տվյալսանքների շարադրանքում գտնում և առանձնացնում է առանձին կատեգորիաներով ձևավորած որոշակի համակարգ, որի շուրջ էլ Նարեկացին կառուցել է իր խոհերը: Դրանք են բանականություն և զգացմունք, հոգի

և մարմին, կյանք և մահ, հույս և հավատ, եսը և համայնը ու այլ հակոտնյա- կատեգորիաներ: Հստակ է, որ այս կատեգորիաներում Նարեկացին չի առաջնորդվել բացառապես մեկին նախապատվությունը տալու հայեցակետով: Նրա համար հավասարապես կարևոր է դրանցից յուրաքանչյուրը: Նա կարևորում է և՛ բանականությունը, և՛ զգացմունքը, հոգու և մարմնի պայքարում հոգուն առաջնությունը տալու քրիստոնեական պարտադրանքը մեկդի դնելով՝ կարևորում է երկուսի համանձնյա գոյության իրավունքը, կյանքի վաղանցիկության ու մարմնի՝ որպես ժամանակավոր կացարանի մասին գրելիս սուսկում է մահվան գալստյան անհրաժեշտությունից ու Աստծուն աղերսում հեռու վանել այն՝ սահմուկեցուցիչ տեսարաններով նկարագրելով իրեն՝ որպես անկենդան մեկնված դիակի: Ըստ այդմ էլ, կյանք ու մահ հակամարտության մեջ Նարեկացին ոչ մեկի իրավունքը առաջնային չի դասում՝ կյանքը համարելով Աստծո կողմից ստեղծված մեծագույն սքանչելի հրաշագործությունը, որի արժեքը միայն մարդն է կարողանում գնահատել՝ վայելելով նրա ամեն ակնթարթը: Կյանքի նկատմամբ մարդու անխախտ իրավունքի մեծ ձգտումն է պատճառը,

որ Նարեկացու պոեմում կյանքի աղերսը գրեթե պահանջի է փոխվում: Եվ այստեղից ծնվում է յուրօրինակ մի փիլիսոփայություն՝ «Աստված մարդու մեջ և մարդը Աստծո մեջ»: Սա բնավ թոնդրակյան հայտնի աղանդի մտայնությունը չէ միայն, որին հարելու համար որպես հերձվածող մեղադրվել են Գրիգոր և Անանիա Նարեկացիները: Սա ընդամենը իր ժամանակից առաջ ընկած ու մարդկային կյանքի ողջ ողբերգականությունը ըմբռնող հեղինակի մտասուեռման ելակետն է մարդկային եսի հանդեպ: Սա է պատճառը, որ Նարեկացին իր վրա է վերցնում համայն մարդկության կատարած մեղքերը, դնում դրանք կշեռքի մի նժարի վրա՝ մյուսում դնելով Արարատը, փոխում ողջ ծովերը թանաքի ու մայրի անտառները գրիչների, որ գրի առնի մարդկային անհատնում մեղքերը, բայց այդ երևակայական գրիչներն ու թանաքն անգամ չեն բավում մարդկության մեղքերը գրի առնելու համար: «Ես եմ համայնը և համայնն է իմ մեջ», - ասում է Նարեկացին: Եզակիից դեպի ընդհանուր ու ընդհանուրից եզակի տարփողումը մեծ հանճարին տանում է դեպի մարդերգության բարձրակետը՝ դառնալ ողջ մարդկության այն միակը, որն ի գորու է ապաշխարելու և հասնելու աստվածային կատարելությանը: Այս

ճանապարհին է, որ կարևորվում են հույսի ու հավատի կովանները՝ որպես պոեմի ելակետներ: Նարեկացու մատյանի լեզուն պերճ է, շքեղ, նորաբանություններով, ասացվածքներով, լեզվական պատկերավորման հայտնի միջոցներով հարուստ, որոնք նրա գրաբար լեզուն հասցրել են որակական մի բարձունքի, որ այսօր էլ դեպի իրեն է ձգում բազմաթիվ ստեղծագործողների: Նրա ստեղծագործություններին անդրադարձել են ոչ միայն հայ գրականության երախտավորները՝ Մայաթ-Նովա, Միսաք Մեծարենց, Հովհաննես Թումանյան, Ավետիք Իսահակյան, Եղիշե Չարենց, այլև հայ և օտարազգի բազմաթիվ ուսումնասիրողներ, որոնց առ այսօր առինքնում է մեծ մտածողի ստեղծագործական աշխարհը:

Գրականության ցանկ

1. Աբեղյան Մանուկ, Հայոց հին գրականության պատմություն, հատոր 1, Երևան, 1944:
2. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1977:
3. Աստվածաշունչ, Բեյրութ, 1985:
4. Ավետիսյան Զավեն, Նարեկացու Մատյանը, Երևան, 2004:
5. Բուզանդ Փավստոս, Հայոց պատմություն, առաջ. Մտ. Մալխասյանցի, Կահիրե, 1954:
6. Եղիշե, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1957:
7. Խորենացի Մովսես, Հայոց պատմություն, առաջ. Մտ. Մալխասյանցի, Երևան, 1981:
8. Հայ միջնադարյան քնարերգություն, Երևան, 1996:

9. Մալխասյանց Ստեփան, Բանասիրական հետազոտություններ, Երևան, 1981:
10. Նալբանդյան Վաչե, Գրիգոր Նարեկացի, Երևան, 1990:
11. Նալբանդյան Վաչե, Եղիշե, Երևան, 1959:
12. Նալբանդյան Վաչե, Վարդանանց պատերազմը և Դ. Դեմիրճյանի «Վարդանանքը», 1955:
13. Նարեկացի Գրիգոր, Մատյան ողբերգության, գրաբարից թրգմ. Մ. Խերանյանի, Երևան, 2003:
14. Նարեկացի Գրիգոր, Մատյան ողբերգության, գրաբարից թրգմ. Վազգեն Գևորգյանի, Երևան, 1996:
15. Չոպանյան Արշակ, Դեմքեր, Փարիզ, 1924:
16. Չոպանյան Արշակ, Երկեր, Երևան, 1988:

Մամուլ

17. Չոպանյան Արշակ, Գրիգոր Նարեկացի, Անահիտ, Փարիզ, 1931, Գ տարի, թիվ 3-4:
18. Բալայան Նաիրա, Արշակ Չոպանյանի «Գրիգոր Նարեկացի» ուսումնասիրությունը, Կանթեղ, 2006, N 2 (27), էջ 56-60:

